ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Շահումյանի թ/ֆ համայնք
Հեռ.՝ 044 84 08 08, էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am
Համայնքային կայք՝ shahumyanitf.am

ՈՐՈՇՈՒՄ

16 հունվարի 2020 թվականի N 01

ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին >> օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1328-Ն և 2006 թվականին մայիսի 18-ի N 912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցն իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հաշվի առնելով, որ հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականատեր Խաչիկ Հրաչիկի Մկրտչյանի՝ 2020 թվականի հունվարի 15-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի 4-րդ փողոց, 3/4 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ քաղաքացիներ Խաչիկ Հրաչիկի Մկրտչյանի՝ ծնված 1959 թվականին, Իզոլդա Խաչիկի Մկրտչյանի՝ ծնված 1963 թվականին, Քնարիկ Խաչիկի Մկրտչյանի՝ ծնված 1986 թվականին, Սուսաննա Խաչիկի Մկրտչյանի՝ ծնված 1987 թվականին, Հրաչիկ Խաչիկի Մկրտչյանի՝ ծնված 1990 թվականին գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը օրինական 154.9 քմ ընդհանուր մակերեսով հողամասի և նրա վրա կառուցված 154.9 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ:
2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

«16» հունվարի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Շահումյանի թ/ֆ համայնք
Հեռ.՝ 044 84 08 08, էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am
Համայնքային կայք՝ shahumyanitf.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2020 թվական N 02

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի <<գ>> կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքապետարանի աշխատակազմի 2020 թվականի հերթական արձակուրդի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

«22» հունվարի 2020 թ.
Շահումյանի թ/ֆ համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ
համայնքի ղեկավարի՝ 2020թվականի
հունվարի 22-ի N 02 որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ՝ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ,ԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆ	ԱՄԻՍ
1	Յայլոյան Լյուդվիկ	Համայնքի ղեկավար	մայիս
2	Պետրոսյան Էդգար	Համայնքի ղեկավարի տեղակալ	մարտ
3	Մանուկյան Համեստ	Աշխատակազմի քարտուղար	սեպտեմբեր
4	Ամիրխանյան Ջավահիր	Գլխավոր մասնագետ	հունիս
5	Հովհաննիսյան Օֆելյա	Առաջատար մասնագետ	մայիս
6	Սարգսյան Անի	Երկրորդ կարգի մասնագետ	օգոստոս
7	Աբրահամյան Զինաիդա	Գործավար	հոկտեմբեր
8	Ավետիսյան Լուիզա	Գրադարանավար	հուլիս
9	Պողոսյան Գոհարիկ	Հավաքարար	հուլիս
10	Յայլոյան Գրիշա	Պահակ	նոյեմբեր

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԵՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Շահումյանի թ/ֆ համայնք
Հեռ.՝ 095 84 00 08
փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am
shahumyanitf.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<08>> հունվարի 2020 թվական N 01

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի՝ 2019 թվականի դեկտեմբերի 18-ի N 01/8/07400-2019 գրությունը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Համայնքում առկա գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի :
2. Հանձնաժողովին (Էդգար Պետրոսյանին)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հնգօրյա ժամկետում և զեկուցել համայնքի ղեկավարին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի

ղեկավարի՝ 2020 թվականի հունվարի 8-ի

N 01 կարգադրության

ԿԱԶՄ

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝

Էդգար Պետրոսյան - Շահումյանի թ/ֆ համայնքի ղեկավարի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

1. Վասիլ Հովսեփյան - Շահումյանի թ/ֆ համայնքը սպասարկող անասնաբույժ
2. Օֆելյա Հովհաննիսյան - Շահումյանի թ/ֆ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ
3. Զինաիդա Աբրահամյան - Շահումյանի թ/ֆ համայնքապետարանի գործավար

Շահումյանի թ/ֆ համայնքապետարանի

աշխատակազմի քարտուղար *Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ*